



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կոռյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 15 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանի 2022 թվականի տարեկան ամփոփիչ հաշվետվությանը (կցվում է) (22-12-15-01).
2. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը, վիրաբուժական ստոմատոլոգիայի և դիմաձնտալի վիրաբուժության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ Աննա Յուրիի Պողոսյանին շնորհել պրոֆեսորի, հետբուհական և շարունակական կրթության կինիկական լաբորատոր ախտորոշման ամբիոնի վարիչի պաշտոնակատար Զարուհի Հուսիկի Գևորգյանին և համաճարակաբանության ամբիոնի դոցենտ Կարինե Սաֆարի Պողոսյանին՝ դոցենտի գիտական կոչումներ և սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԲՈԿԻ հաստատմանը, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում է) (22-12-15-02).





3. Երաշխավորել տպագրության ներկայացված հետևյալ ուսումնական գրականությունը (22-12-15-03)՝

- 1) Ն.Բ.Զիչոյանի «Ֆարմակոգնոզիա» հայերեն դասագրքի առաջին մասը.
 - 2) Մ.Հ.Բեգլարյանի, Ռ.Մ.Հանիսյանի «Pharmaceutical and medical commodity science» անգլերեն լեզվով ուսումնական ձեռնարկը.
 - 3) Ի.Է.Դանիելյանի «Նուտրիցիոլոգիայի և դիետոլոգիայի հիմունքներն ընտանեկան բժշկի պրակտիկայում» ուսումնական ձեռնարկը:
4. Սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ